ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

Կետ	Տվյալ
Պատվիրատու	Գյումրու քաղաքապետարան
Վայր	Գյումրի, Վարդանանց հրապարակ (տոնածառը՝ նախորդ տարվա տեղում)
Ամսաթիվ	Ենթակա է ճշտման
Առաջարկվող բյուջե	Շրջանակը՝ մինչև 60 մլն ՀՀ դրամ. նախագծով նախատեսված՝ ≈ 58 մլն ՀՀ դրամ
Հյուրերգավոր արտիստներ	Տաթեւ Ասատրյան, Սոնա Ռուբինյան, Yellow Heart, Արամ MP3, Էրիկ Կարապետյան (կամ համարժեք) եւ այլ արտիստներ
Կարգավիճակ	Նախնական. **նախահաշիվը պետք է բխի գնման մրցույթի արդյունքներից**

1. Նպատակ և ընդհանուր նկարագրություն


Նախագծի նպատակն է Գյումրու գլխավոր հրապարակում կազմակերպել անվտանգ, գունեղ և հիշարժան միջոցառում, որի կենտրոնում քաղաքի տոնածառի լուսավորման ակնթարթն է: Օրվա ընթացքում հրապարակում տեղի է ունենում ընտանեկան ծրագիր, երեկոյան՝ պաշտոնական մաս, լույսերի վառում, հրավառություն և հայտնի արտիստների համերգ:

- Տոնական մթնոլորտ ստեղծել գյումրեցիների և քաղաք այցելողների համար:
- Ներգրավել տեղական կոլեկտիվներին և արհեստավորներին՝ տալով նրանց ելույթի հնարավորություն:
- Ապահովել հանդիսատեսի անվտանգությունը և բարեկեցությունը ձմեռային պայմաններում:
- Քաղաքի կերպարը ներկայացնել լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում:

2. Վայր և տեղադիրք

Միջոցառումը կազմակերպվում է Վարդանանց հրապարակում: Տոնածառը մնում է նախորդ տարվա տեղում, իսկ բեմը տեղադրվում է ծառից մոտ պատշաճ հեռավորության վրա՝ ծառի կողքից, որպեսզի բեմը չծածկի ծառը և հանդիսատեսը մեկ հայացքով տեսնի և՛ բեմը, և՛ ծառը: Բեմի կողքերի LED էկրաններով լույսերի վառման պահը կերևա նաև հեռու կանգնածներին:

Վարդանանց հրապարակ՝ սխեմատիկ հատակագիծ (հրապարակի եզրագիծը պայմանական է)



Նշում. ճշգրիտ կոորդինատները և հեռավորությունները կճշտվեն տեղում չափագրությունից հետո։ Հանդիսատեսի սահմանային տարողությունը՝ ըստ ազատ մակերեսի։

Նկար 1. Հրապարակի սխեմատիկ հատակագիծ՝ բեմի, տոնածառի և գոտիների դասավորությամբ

Տեղադրման սկզբունքներ

- Բեմը՝ հրապարակի եզրին, դեմքով դեպի հանդիսատեսի գոտի. նրա հետևում արտիստների վրաններ։
- Ծառի շուրջ՝ R = 8 մ անվտանգության ցանկապատ (էլեկտրական միացումներ, դեկորներ)։
- Ձայնի և լույսի կառավարման կետը (FOH)՝ հանդիսատեսի գոտու կենտրոնում, բեմից ≈ 25 մ հեռավորության վրա։
- Մանկական գոտին և տոնավաճառը՝ բեմից հեռու, որպեսզի ձայնը չխանգարի, իսկ երեխաները չլինեն ամբոխի կենտրոնում։
- Շտապ օգնության և հրշեջների համար՝ ազատ երթուղի առնվազն 4 մ լայնությամբ, 3 վերահսկվող մուտք։


Լուսանկարային նյութեր

Ստորև նախատեսված են լուսանկարների տեղերը։ Դրանց վրա դիզայները կմոնտաժի բեմի և ծառի առաջարկվող դիրքը։ Լուսանկարները պետք է արվեն տեղում՝ նշված տեսանկյուններից։

Լուսանկար 1. Օդային տեսարան (դրոն)՝ հրապարակ և ծառ	Լուսանկար 2. Ծառից դեպի բեմի առաջարկվող տեղը	Լուսանկար 3. Բեմի տեղից դեպի ծառ և հանդիսատեսի գոտի

3. Բեմ՝ չափեր և տեխնիկական պահանջներ

Առաջարկվում է *առնվազն* 14×10 մ բեմ՝ 1.5 մ բարձրությամբ և ծածկույթով: Այդ չափը բավարար է նվագախմբով և պարային խմբով ելույթների համար, իսկ կողքերի LED էկրանները թույլ են տալիս ցուցադրել ուղիղ եթերը:



Նկար 2. Բեմի հատակագիծ և ճակատային տեսք՝ չափերով

Տարր	Պահանջ
Բեմահարթակ	14×10 մ, բարձրությունը՝ 1.5 մ, հաստատուն հիմք, դիմացկուն ծածկ
Ծածկույթ	Ֆերմային կառույց՝ ձյան և քամու ծանրաբեռնվածության հաշվարկով. բարձրությունը ≈ 9 մ
Հետնապատ	Դեկորատիվ պատ՝ 12×5 մ, ձմեռային թեմա
LED էկրաններ	2 հատ՝ 6×3.4 մ, բեմի երկու կողմում
Ձայն	Line-array համակարգ երկու կողմից, մոնիտորներ, FOH կետ
Լույս	Շարժական գլուխներ, LED պանելներ, ստրոբեր. ծառի լուսավորման հետ համաժամացում
Աստիճաններ	2 հատ՝ 2 մ լայնությամբ, ձեռնակալներով
Արտիստների վրաններ	2 հատ՝ 6×4 մ, ջեռուցվող, հայելիներով և հյուրընկալությամբ

Տարր	Պահանջ
Էլեկտրամատակարարում	Հիմնական միացում + պահեստային գեներատոր
Անվտանգություն	Բեմի շուրջ արգելապատնեշ, ամրացում քամու դեմ, պատասխանատու ինժեներ

4. Օրվա ծրագիր

Ժամ	Իրադարձություն	Վայր
15:00–17:00	Ընտանեկան ծրագիր՝ տոնավաճառ, Ձմեռ պապ և Ձյունանուշիկ, մանկական անիմացիա	Մանկական գոտի, հրապարակ
17:00–17:50	Գյումրու կոլեկտիվների ելույթներ՝ երաժշտական դպրոցներ, երգչախմբեր, պարային խմբեր	Բեմ
17:50–18:15	Հյուրերի ողջույն, տեսահոլովակ քաղաքի մասին	Բեմ, LED էկրաններ
18:15–18:30	Պաշտոնական մաս՝ քաղաքապետի ողջույնի խոսք	Բեմ
18:30–18:40	Լույսերի վառում (հաշվարկ 10-ից 0) և լուսային շոու ծառի վրա	Տոնածառ
18:40–18:47	Հրավառություն	Հրապարակ
18:50–22:00	Տոնական համերգ	Բեմ
22:00–22:15	Հրավառություն	Հրապարակ

5. Համերգային ծրագիր

Արտիստների հերթականությունը կկազմվի այնպես, որ երեկոյի ընթացքում հանդիսատեսի էներգիան աստիճանաբար աճի։ Եթե որևէ արտիստ ազատ չլինի, հնարավոր են համարժեք փոխարինողներ։

Ժամ	Արտիստ	Տևողություն	Մոտավոր հոնորար (մլն ՀՀ դրամ)
18:00–18:40	Արտիստ 1	40 րոպե	5.0
18:40–19:20	Արտիստ 2	40 րոպե	4.0
19:20-20:00	Արտիստ 3	40 րոպե	2.0
20:00-20:45	Երաժշտական ներկայացում	45 րոպե	3. 0
20:45-21:30	Արտիստ 4	45 րոպե	2.0
21:30-22:15	Արտիստ 5	45 րոպե	2.0
22:15-22:30	Հրավառություն	≈ 10 րոպե	4. 0
	Ընդամենը		**22.0**

*Հոնորարների գումարները հիմնված են արտիստների մենեջերների հետ խիստ նախնական քննարկումների վրա։ Վերջնական թվերը **ՊԵՏՔ Է ԲԽԵՆ ՄԻԱՅՆ ԳՆՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ**։*

6. Նախնական բյուջե

№	Հոդված	Ներառում է	Գումար (մլն ՀՀ դրամ)
1	Բեմ	14×10 մ, ծածկույթով, հետնապատ, աստիճաններ, մոնտաժ/ապամոնտաժ	10
2	Ձայն	Line-array, մոնիտորներ, FOH, տեխնիկական անձնակազմ	4. 0
3	Լույս	Բեմի լույս, ծրագրավորում	4. 0
4	LED էկրաններ	2 էկրան՝ 6×3.4 մ, տեսակառավարում	4.0
5	Արտիստներ	5 արտիստ (տե՛ս բաժին 5)	15.0
6	Երաժշտական ներկայացում՝ արվեստի եւ երաժշտական դպրոցների սաների մասնակցությամբ	Ռեժիսուրա, երաժշտական ղեկավար, խորեոգրաֆ, սցենար, բեմանկարիչ (տե՛ս բաժին 5)	3. 0
7	Տեղական կոլեկտիվներ, վարողներ	Պարային համույթներ, երաժշտական խմբեր	2.0
8	Հրավառություն	5–7 րոպե, լիցենզավորված կազմակերպություն	4.0
9	Լույսերի կածան	Քաղաքապետարանից մինչեւ քարե գորգ՝ շարժական լուսատուներ՝ հանդիսավոր մուտքի համար	4. 0
10	DJ	Դեկտ. 24-31-ը երեկոյան երաժշտական մասի համար	1. 0
11	Մանկական ծրագիր	Ձմեռ պապ, Ձյունանուշիկ, անիմացիա, տնակ	1.0
12	Սուրբծննդյան տոնավաճառ	Վրաններ/տնակներ, ձևավորում, լուսավորում	1. 0
13	Տոնական լոկալ միջոցառումներ	Գյումրու տարբեր թաղամասերում 24-31-ը տոնական միջոցառումներ	2. 0
14	Պահուստ (≈ 5%)	Անկանխատեսելի ծախսեր	3.0
	ԸՆԴԱՄԵՆԸ		**58.0**

ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԽԻՍՏ ՆԱԽՆԱԿԱՆ Է. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԿԱՐՈՂ Է ԿԱՋՄՎԵԼ ՄԻԱՅՆ ԳՆՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ։

7. Անվտանգություն և կազմակերպում

- Անվտանգության պլանը համաձայնեցնել ոստիկանության, հրշեջ-փրկարար ծառայության և շտապ օգնության հետ։

- Հանդիսատեսի առավելագույն թվի հաշվարկ՝ ըստ հրապարակի ազատ մակերեսի. արգելապատնեշներով բաժանել հատվածների։
- Հարակից փողոցների փակում, տրանսպորտի շրջանցման ճանապարհներ, կայանատեղեր։
- Առնվազն 2 շտապ ելք, բժշկական կետ, հրշեջ մեքենա հերթապահության մեջ։

8. Առաջարկներ՝ օրվա միջոցառումների համար

- Գյումրու ինքնությունը ընդգծող հատված՝ գյումրեցի վարողներ, տեղական հումոր, Գյումրու մասին երգ կամ տեսահոլովակ։
- 3–4 րոպեանոց լուսային շոու ծառի վրա՝ երաժշտությանը համաժամացված, վառման հաշվարկից անմիջապես հետո։
- Տոնավաճառ՝ գյումրեցի արհեստավորների և խոհարարների մասնակցությամբ (գյումրիական ուտեստներ, տաք ըմպելիքներ)։
- Ջերմության կետեր՝ ջեռուցվող վրաններ, տաք թեյ և սուրճ, հատկապես երեխաների և տարեցների համար։
- Բարեգործական բաղադրիչ՝ նվերներ երեխաներին, հնարավոր է նվիրատվության ակցիա։
- Եղանակի պլան՝ ծածկույթով բեմ, անձրևանոցներ, հետաձգման սցենար, եթե եղանակը վտանգավոր է։

9. Նախապատրաստական ժամանակացույց

Ժամկետ	Գործողություն
Միջոցառումից 45 օր առաջ	Նախագծի հաստատում, բյուջեի հաստատում, գնումների ընթացակարգի մեկնարկ
45 օր	Արտիստների հետ պայմանագրեր, ամսաթվերի ամրագրում
30 օր	Բեմի, ձայնի, լույսի, էկրանների մատակարարների ընտրություն
30 օր	Անվտանգության պլանի համաձայնեցում ոստիկանության, հրշեջ-փրկարար ծառայության, շտապ օգնության հետ
30 օր	Գովազդային արշավի մեկնարկ, տոնավաճառի մասնակիցների ընտրություն
3–2 օր	Բեմի մոնտաժ, ծառի լուսավորման ստուգում
1 օր	Տեխնիկական փորձ
Միջոցառման օր	Ծրագրի իրականացում
+1 օր	Ապամոնտաժ, մաքրում, հաշվետվություն

10. Ճշտվելիք հարցեր

- Կա՞ն ազատ միջոցներ՝ այս ծախսն իրականացնելու համար։